ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ. ՎԱՏԹԱՐԱՑՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՃԳՆԱԺԱՄ

Հիմնաբառեր. *ժողովրդագրական իրավիճակ, դեպոպուլյացիա, ճգնաժամ, բնական հավելաճ, միգրացիա*

Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է: Հեղինակ է շուրջ 35 գիտական աշխատանքների:

Հայաստանի Հանրապետության ներկայի ժողովրդագրական իրավիճակը բնութագրելու համար շատ հաճախ օգտագործվում են «դեպոպուլյացիա» (վատթարացում), «ժողովրդագրական ճգնաժամ», «ժողովրդագրական աղետ» և այլ եզրույթներ: Խնդիրն այն է, որ շատ հաճախ դրանք գործածվում են նույն իմաստով՝ ապակողմնորոշելով հանրությանը և կառավարությանը ժողովրդագրական խնդիրներից և խեղաթյուրելով դրանց կարևորությունը երկրի հետագա զարգացման համար:

ՀՀ վարչապետի 2019 թվականի ապրիլի 4-ի N347-Ա որոշմամբ[1] ստեղծվեց ժողովրդագրական իրավիճակի բարելավման խորհուրդ, որի հիմնական նպատակը ներկայում առաջացած ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը հաղթահարելու ուղիներ գտնելն է: ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղիները ճիշտ մատնանշելու և միջոցառումների արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար, նախևառաջ, անհրաժեշտ է պարզել, թե վերը նշված եզրույթներից որի՞ տիրույթում ենք այժմ գտնվում: Նախ՝ մեկնաբանենք այդ եզրույթները:

Դեպոպուլյացիա (վատթարացում) - բնակչության թվաքանակի նվազման երկարատև գործընթաց, որը տեղի է ունենում բնակչության «նեղ» վերարտադրության հետևանքով՝ հանգեցնելով վերջինիս «ծերացմանը»: Դա կարող է ուղեկցվել միգրացիայի ինչպես բացասական, այնպես էլ դրական մնացորդով:

Ժողովրդագրական ճգնաժամ - բնակչության թվաքանակի կտրուկ նվազում կամ աճ: Հիմնականում օգտագործվում է բնակչության բնական աճի կամ միգրա-

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=98923

ցիայի բացասական բարձր մնացորդ ունեցող երկրների կամ տարածաշրջանների համար: Դա ուղեկցվում է նաև ազգաբնակչության հոգևոր, մշակութային արժեքների անկմամբ:

Ժողովրդագրական աղետ - կարճ ժամանակահատվածում (մինչև 5 տարի) բնակչության թվաքանակի կտրուկ անկում՝ պայմանավորված սոցիալական և բնակլիմայական պայմանների նշանակալի վատթարացմամբ:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում բերված պաշտոնական վիճակագրական տվյալներից, ՀՀ-ում ժողովրդագրական բոլոր հիմնական ցուցանիշները բացասական ուղղությամբ են փոփոխվել: Մասնավորապես՝ 1990 թ. համեմատ, 2018 թ. մշտական բնակչության թվաքանակը նվազել է 15,4 տոկոսով, 1000 բնակչի հաշվով բնական հավելաճը՝ մոտ 4,5 անգամ, 1000 բնակչի հաշվով միգրացիայի բացասական մնացորդն աճել է մոտ 6 անգամ, ծնելիության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով նվազել մոտ 2 անգամ, մահացության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով աճել է մոտ 40 տոկոսով, պտղաբերության գործակիցը 1 կնոջ հաշվով նվազել է մոտ 38,5 տոկոսով, բնակչության միջին տարիքն աճել է մոտ 13,4 տոկոսով (2017 թ.՝ համեմատած 2000 թ. հետ): Նշված ցուցանիշների շարժընթացն ու ընդգրկման ժամանակահատվածը (մոտ 30 տարի) վկայում են, որ ՀՀ–ն ներկայում ժողովրդագրական իրավիճակի «դեպոպուլյացիոն» շրջանում է:

Բնակչության դեպոպուլյացիան բնորոշ է աշխարհի շատ երկրների: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, վիճակն առավել վատթար է եվրոպական երկրների գերակշիռ մասում: Այս երկրները բնակչության բնական հավելաճի բացասական մնացորդը փորձում են փոխհատուցել իմիգրացիոն (ներգաղթի) «մեղմ» քաղաքականությամբ: Իմիգրացիային միտված ավելի «ագրեսիվ» քաղաքականություն վերջին տարիներին իրականացնում է Ռուսաստանի Դաշնությունը՝ առավելապես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների քաղաքացիների նկատմամբ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ ժողովրդագրական հիմնական ցուցանիշների շարժընթացը 1990-2018 թթ.[13]

	1990	*2000*	*2005*	*2010*	*2015*	*2017*	*2018*
Մշտական բնակչության թվաքանակը *(հազ. մարդ)*	3514.9	3226.9	3156.0	3055.2	3010.6	2986.1	2972.7
Բնական հավելաճի գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով	16,3	3.1	3.5	5.5	4.6	3,5	3.6
Բնակչության միգրացիայի մնացորդը՝ 1000 բնակչի հաշվով	1,7	-2,7	-2,4	-12,3	-8,6	-8,0	---
Ծնելիության ընդհանուր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով *(%)*	22,5	10.6	11.9	14.7	13.9	12,6	12.3
Մահացության ընդհանուր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով *(%)*	6,2	7.5	8.4	9.2	9.3	9,1	8.7
Պտղաբերության գործակիցը՝ 1 կնոջ հաշվով *(երեխա)*	2,6	1.3	1.3	1.5	1.6	1,6	1.6
Բնակչության միջին տարիքը	---	32,1	33,7	34,3	36.1	36,4	---

[2] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգրքեր՝ 2018, 2011, 2006, 2001, 1993-1994 թթ., https://www.armstat.am/am/?nid=12&id=11011&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Բնակչության բնական աճը 2017 թ.[3]



Քարտեզում արտացոլված են բնակչության դեպոպուլյացիա ունեցող երկրները՝ բնակչության բացասական աճ (մուգ կապույտ), աննշան աճ (կապույտ) և զգալի աճ (կանաչ, դեղին, կարմիր):

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի դեպոպուլյացիան հիմնականում պայմանավորված է երեք գործոնով.

1. Ծնելիության ցածր մակարդակ: Հայաստանում ծնելիության գործակիցը 2019 թ. 1.6 է: Աշխարհում ծնելիության ամենացածր գումարային գործակից ունեցող երկրներն են Սինգապուրը՝ 1.0 և Պորտուգալիան՝ 1.2 ցուցանիշով: Նշենք, որ բնակչության պարզ վերարտադրության գործակիցը պետք է հավասար լինի 2,1-ի:

2. Միգրացիայի բացասական մնացորդ (վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ միգրացիայի բացասական մնացորդը տարեկան կտրվածքով միջինում 24 հազար մարդ է)[4]:

3. Ուրբանիզացիայի բարձր մակարդակ: ՀՀ-ում ուրբանիզացիայի մակարդակը 2018 թ. մոտ 64 տոկոս է[5], այնինչ աշխարհում դա տատանվում է 50-52 տոկոսի սահմաններում: Երևանում բնակվում է ՀՀ բնակչության մոտ 36 տոկոսը (2018 թ.)[6]: Մինչդեռ այլ երկրներում մայրաքաղաքային բնակչության թվաքանակը հիմնականում կազմում է տվյալ երկրի ամբողջ բնակչության առավելագույնը 15 տոկոսը:

Ակնհայտ է, որ այս ուղղություններով պետք է իրականացնել պետական մակարդակով լուրջ և համակարգված քաղաքականություն: Որպես կարճաժամկետ թիրախ՝ անհրաժեշտ է ընտրել էմիգրացիայի (արտագաղթի) տեմպերի կանխումը և ուրբանիզացիայի մակարդակի նվազեցումը: Ինչո՞ւ առաջին հերթին պետք է թիրախավորել այս գործոնները: Միջազգային փորձը (հատկապես՝ զարգացած երկրների) ցույց է տալիս, որ, ի վերջո, չկա ծնելիության խթանման այնպիսի արդյունավետ սոցիալական քաղաքականության գործիքակազմ, որը հնարավորություն կտա կարճաժամկետում բարելավելու ժողովրդագրական իրավիճակը: Միաժամանակ, ուրբանիզացիայի տեմպերի թուլացումը կարող է անմիջական դրական ազդեցություն ունենալ ծնելիության ընդհանուր մակարդակի վրա, քանի որ կենտրոններում բնակվող երիտասարդները (հիմնականում՝ կանայք) շատ դեպքերում կարևորում են աշխատանքային առաջընթացը՝

[3] https://commons.wikimedia.org/wiki/File:%D0%95%D1%81%D1%82%D0%B5%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%BF%D1%80%D0%B8%D1%80%D0%BE%D1%81%D1%82_%D0%BF%D0%BE_%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%B0%D0%BC_%D0%BC%D0%B8%D1%80%D0%B0_2017.png

[4] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգրքեր՝ 2009-2018 թթ.:

[5] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական տարեգիրք 2018 թթ.:

[6] Նույն տեղում:

հետին պլան մղելով ֆիզիոլոգիական «կարիերան»:

Ինչ վերաբերում է միգրացիոն խնդիրներին, ապա պետք է նշել, որ 2018 թ. երկրում տեղի ունեցած արմատական փոփոխությունների արդյունքում իրական հնարավորություն է ստեղծվել արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացմամբ ոչ միայն նվազեցնելու արտագաղթի տեմպերը, այլև խթանելու ներգաղթը (խոսքը, իհարկե, արտասահմանում ապրող մեր հայրենակիցների մասին է):

Կարծում ենք՝ բնակչության արտագաղթի տեմպերը նվազեցնելու տեսանկյունից առաջնային և իրական քայլեր պետք է կատարվեն հատկապես երիտասարդ և երեխա չունեցող ընտանիքների բնակարանային ապահովման մատչելիության ընդլայնման, ինչպես նաև ծնելիության մակարդակի բարձրացման նպատակով՝ ֆինանսական խրախուսման ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Հ.Գ. *Բնակչության դեպոպուլյացիան անշրջելի երևույթ չէ. այն առաջացել է մարդու ներգործությամբ և, հետևաբար, կարող է վերանալ նրա միջամտությամբ:*